ԻՆՉՊԵՍ ԱՇԽԱՏԵՑ ԳԵՆԴԵՐԱՅԻՆ ՔՎՈՏԱՆ 2017 ԹՎԱԿԱՆԻ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ

ՎԵՐԼՈՒԾԱԿԱՆ ՏԵՂԵԿԱՆՔ

ՀԱԿԱՄԱՐ

Տեղեկանքը կազմված է «Խթանելով կանանց քաղաքական մասնակցությունը Հայաստանում» ծրագրի շրջանակներում անցկացված ընտրական գործընթացներում կանանց մասնակցության մշտադիտարկման արդյունքների հիման վրա:

Ծրագիրն իրականացվում է «ՕքսԵՋեն» Երիտասարդության և կանանց իրավունքների պաշտպանության հիմնադրամի, WomenNet.am տեղեկատվա-վերլուծական պորտալի և «Ընտանիքի Ակադեմիա» ՀԿ-ի հետ համագործակցությամբ, Շվեդիայի կառավարության ֆինանսական աջակցությամբ:

Փորձագետներ՝ **Թամարա Հովնաթանյան, Լիլիթ Զաքարյան, Ջինա Սարգիզովա**

Բովանդակություն

1. Գենդերային քվոտայի ձևակերպումը ՀՀ ընտրական օրենսգրքում
2. Կուսակցությունների ցուցակներում կին թեկնածուները 30% էին
3. Կին թեկնածուներին հատկացվել է եթերի միայն 9%-ը
4. Կանայք ընտրական հանձնաժողովներում
5. Կին թեկնածուները ըստ տարիքի և զբաղմունքի
6. ՀՀ Ազգային ժողովի կազմում կանանց ներկայացվածությունը 18% է
7. Աշխարհի խորհրդարաններում կանայք 23,4% են
8. «Կանանց օրակարգը» ուժի մեջ է
9. Տարածքային ցուցակները իջեցրեցին քվոտայի արդյունավետությունը
10. Ի՞նչ է ցույց տվել նախընտրական ծրագրերի գենդերային վերլուծությունը
11. Քվոտան լավագույնս աշխատեց Երևանի ավագանու ընտրություններում
12. Քաղաքի արդար կառավարման սկզբունքները նախընտրական ծրագրերում

Եզրակացություն

Գենդերային քվոտայի ձևակերպումը ՀՀ ընտրական օրենսգրքում

ՀՀ ընտրական օրենսգրքում տեղ գտած կանանց քաղաքական մասնակցությանը վերաբերող դրույթները նախատեսում են՝

– 83.4-րդ և 83.10-րդ կետերով՝ կուսակցությունների ցուցակներում սեռերի համամասնության մինչև 30/70 բարձրացումը (համամասնությունն ուժի մեջ է նաև տարածքային ցուցակների համար).
– 130.2-րդ հոդվածով՝ կուսակցությունների ցուցակներում 30/70 համամասնության տարածումը նաև համամասնական ընտրակարգով անցկացվող ՏԻՄ ընտրությունների, այսինքն՝ Երևանի, Գյումրու և Վանաձորի ավագանու ընտրությունների վրա.
– 100.3-րդ հոդվածով նախատեսված երաշխավորությունը, ըստ որի՝ «եթե մանդատից հրաժարվելու արդյունքում տվյալ խմբակցության որևէ սեռի ներկայացուցիչների թիվը նվազում է, և արդյունքում ցածր է լինելու 25 տոկոսից, ապա մանդատը տրվում է այդ նվազ ներկայացված սեռի հաջորդ թեկնածուին».
– 141.6-րդ և 141.8-րդ դրույթներով ամրագրված երաշխավորությունը, ըստ որի համամասնական համակարգով անցկացվող Երևանի, Գյումրու և Վանաձորի ավագանու ընտրությունների արդյունքում ձևավորվող խմբակցության կազմում որևէ սեռի ներկայացուցիչների ներկայացվածությունը չի կարող ցածր լինել, քան 25 տոկոսը:

Դրա հետ մեկտեղ, անցումային և եզրափակիչ դրույթներով, մասնավորապես, 144-րդ հոդվածի 14-րդ, 15-րդ և 16-րդ կետերով վերը նշված դրական փոփոխություններն ուժի մեջ են մտնելու միայն 2022 թվականի ընտրություններում, իսկ մինչ այդ գործելու է 25/75 համամասնություն ապահովող դրույթը:



Ավելի քան 60 տեղական և միջազգային կազմակերպություններ միավորող Գենդերային թեմատիկ խումբը դիմել էր ԱԺ բոլոր խմբակցություններին, ինչպես նաև ԱԺ մշտական հանձնաժողովներ (պետական-իրավական, մարդու իրավունքների պաշտպանության հարցերի և եվրոպական ինտեգրման հարցերի) առաջարկով, այն է՝ ներառել քննարկման ենթակա այլ հարցերի թվում նաև 144-րդ հոդվածի 14-րդ, 15-րդ և 16-րդ կետերի դրույթները չեղյալ համարելու առաջարկը: Դրանով իսկ 83.4-րդ, 100.3-րդ, 130.2-րդ, 141.6-րդ և 141.8-րդ հոդվածների դրույթները կգործեին 2017 թվականին կայանալիք խորհրդարանական ընտրություններում: Առաջարկը մերժվել էր:

Գործող ՀՀ ընտրական օրենսգրքի «Անցումային դրույթներ» բաժնում 144-րդ հոդվածի 14-րդ կետը սահմանում է. «Մինչև 2021 թվականի հունվարի 1-ը Ազգային ժողովի, Երևանի, Գյումրու և Վանաձորի ավագանիների ընտրությունների ժամանակ կուսակցության, կուսակցությունների դաշինքի և դաշինքում ընդգրկված կուսակցություններից յուրաքանչյուրի համապետական ընտրական ցուցակի առաջին մասում 1-ին համարից սկսած՝ ցանկացած ամբողջ թվով քառյակներում (1-4, 1-8, 1-12 և այդպես շարունակ՝ մինչև ցուցակի ավարտը) յուրաքանչյուր սեռի ներկայացուցիչների թիվը չպետք է գերազանցի 75 տոկոսը, իսկ ընտրություններին մասնակցող կուսակցության (կուսակցությունների դաշինքի) տարածքային ընտրական ցուցակում յուրաքանչյուր սեռի ներկայացուցիչների թիվը չպետք է գերազանցի 75 տոկոսը»:

Դեռևս 2016-ին հրապարակված ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ-ի և Վենետիկի հանձնաժողովի զեկույցում նշվում էր, որ տարածքային ցուցակների կիրառման պարագայում ՀՀ ընտրական օրենսգիրքը, ըստ էության, չի երաշխավորում, որ կուսակցությունների ցուցակներում թեկնածուների սեռային համամասնությունը կպահպանվի դե ֆակտո ընտրված Ազգային ժողովում: Բացի այդ, «Ընտրական համակարգերի՝ քաղաքականության մեջ կանանց ներկայացվածության վերաբերյալ» վերլուծական զեկույցում (2009) Վենետիկի հանձնաժողովը, դիտարկելով «բաց» կամ ազատ ցուցակների ներդրման փորձը տարբեր երկրներում, նշել էր, որ դա կարող է հանգեցնել ավելի քիչ թվով կանանց ընտրության:

1. Կուսակցությունների ցուցակներում կին թեկնածուները 30% էին

2017-ի ապրիլի 2-ին ընտրություններում առաջադրված քաղաքական ուժերի՝ 5 կուսակցությունների և 4 դաշինքների համապետական ցուցակներում, ընդհանուր թվով, 29,5% կին թեկնածու էր ներկայացված: Տարածքային ցուցակներով կին թեկնածուների թիվը 30,8 % էր: Այսինքն՝ 30/70 համամասնության հետաձգումը արդարացված չէր, քանի որ կուսակցություններն իրականում պատրաստ էին ներգրավելու իրենց ցուցակներում ավելի մեծ թվով կանանց, քան 25/75 համամասնությունը, որը պահանջում էր Ընտրական օրենսգրքի անցումային դրույթը:

Քաղաքական ուժերը դեռևս պատրաստ չեն զիջել կանանց ավելի մեծ թվով տեղեր առաջին հնգյակում և տասնյակում՝ խիստ պահպանելով օրենքի տառն այս հարցում: Դրա փոխարեն, ինչպես ցույց է տալիս ցուցակների վերլուծությունը, համալրում են կին թեկնածուներով ցուցակների վերջին տասնյակները՝ հասցնելով առանձին դեպքերում կանանց ներկայացվածությունը 100%-ի:

Այսպիսով.

- Ընտրություններին մասնակցող քաղաքական ուժերի ցուցակներից ոչ մեկը կին չի գլխավորել:
- Կանայք չկային նաև երկրորդ հորիզոնականում:
- Երեք քաղաքական ուժեր ընդգրկել էին կանանց 3-րդ հորիզոնականում, մնացածը՝ 4-րդ տեղից սկսած:
- Առաջին տասնյակում գրեթե բոլորը 2 կին էին ներկայացրել, և միայն մեկ կուսակցություն առաջին տասնյակում ընդգրկել էր 3 կին:

ԽՈՐՀՐԴԱՐԱՆԱԿԱՆ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ 2017

Կին թեկնածուների թիվը համաթվային ցուցակներում 29,5%

«Ելք» դաշինք
Թեկնածու/կին 121/39 32%
Առաջին տասնյակ
4 Սաֆե Թանդիլյան
7 Լենա Նազարյան

«Ազատ դեմոկրատներ»
Թեկնածու/կին 101/38 38%
Առաջին տասնյակ
4 Անահիտ Բախչյան
6 Անուշ Խաչատրյան
8 Սոնա Մինասյան

«Հայկական վերածնունդ»
Թեկնածու/կին 300/89 29,6%
Առաջին տասնյակ
3 Հեղինե Բիշարյան
7 Մարինե Թոչարյան

«Ծառուկյան» դաշինք
Թեկնածու/կին 188/53 28%
Առաջին տասնյակ
3 Նաիրա Զոհրաբյան
8 Իվետա Տոնոյան

«Կոնգրես-ՀԺԿ» դաշինք
Թեկնածու/կին 140/45 32,1%
Առաջին տասնյակ
4 Զոյա Թադևոսյան
8 Լիդա Մելիքյան

ՀԿԿ
Թեկնածու/կին 173/44 25,4%
Առաջին տասնյակ
4 Մարիամ Շահինյան
8 Սոսի Օթարյան

ՀՅԴ
Թեկնածու/կին 171/48 28%
Առաջին տասնյակ
4 Արմենուհի Կարոեցյան
8 Ռուզաննա Առաքելյան

«ՕՐՕ» դաշինք
Թեկնածու/կին 149/41 27,5%
Առաջին տասնյակ
4 Էլինար Վարդանյան
8 Սուսաննա Մուրադյան

ՀՅԿ
Թեկնածու/կին 197/58 29,4%
Առաջին տասնյակ
3 Արփինե Պողոսյանցյան
8 Մարգարիտ Եսայան

Կին թեկնածուների թիվը տարածքային ցուցակներում 30,8%

«Ելք» դաշինք
Թեկնածու/կին 112/37
33%

«Ազատ դեմոկրատներ»
Թեկնածու/կին 88/32
36,4%

«Հայկական վերածնունդ»
Թեկնածու/կին 164/49
29,8%

«Ծառուկյան» դաշինք
Թեկնածու/կին 134/39
28%

«Կոնգրես-ՀԺԿ» դաշինք
Թեկնածու/կին 125/43
34,4%

ՀԿԿ
Թեկնածու/կին 130/41
32%

ՀՅԴ
Թեկնածու/կին 146/45
31%

«ՕՐՕ» դաշինք
Թեկնածու/կին 126/35
28%

ՀՅԿ
Թեկնածու/կին 118/32
27%

Կին թեկնածուներին հատկացվել է եթերի միայն 9%-ը

ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ դիտորդական առաքելության կողմից լրատվամիջոցների մշտադիտարկման արդյունքների համապատասխան՝ ամենադիտվող լրատվական հաղորդումների ընթացքում կին քաղաքական գործիչները ստացել են ընդամենը 9% քարոզչական լուսաբանում:

Առաքելության ամփոփիչ զեկույցի գնահատականներով, ընդհանուր առմամբ, կին թեկնածուները քարոզարշավի ընթացքում աջակցություն են ստացել իրենց կուսակցություններից և ակտիվորեն ներգրավված են եղել քարոզչության մեջ: «Այնուհանդերձ, նախընտրական շտաբներում նրանց վճռորոշ պաշտոններ չեն տրվել, և նրանք հազվադեպ են քարոզչական միջոցառումների ընթացքում եղել հիմնական խոսնակներ: Կուսակցությունների ընտրական ծրագրերը ուղղակիորեն չեն անդրադարձել հանրային կյանքում կանանց մասնակցության խնդրին: Բացի այդ, կին թեկնածուներն իրենք էլ քարոզչության ընթացքում լռել են գենդերային հարցերի մասին՝ նախապատվությունը տալով առավել լայն սոցիալական խնդիրների քննարկմանը»,- ասված է ամփոփիչ զեկույցում:

2. Կանայք ընտրական հանձնաժողովներում

Կենտրոնական ընտրական հանձնաժողովի յոթ անդամներից երեքը կին են, ներառյալ նախագահի տեղակալը: Կանայք կազմում են ԸԸՀ-ի անդամների 35%-ը, սակայն նրանց միայն 16%-ն է զբաղեցնում ղեկավար պաշտոններ: Իսկ ՏԸՀ հանձնաժողովներում, միջազգային դիտորդների գնահատականներով, անդամների 57%-ը կանայք էին, ներառյալ 39%-ը՝ նախագահի պաշտոնում: Նշենք, որ օրենքով ԸԸՀ-ի անդամներից առնվազն երկուսը պետք է լինեն հակառակ սեռի ներկայացուցիչ, իսկ ՏԸՀ-ների համար գենդերային պահանջներ չկան:

3. Կին թեկնածուները ըստ տարիքի և զբաղմունքի

Առաջադրված կին թեկնածուների 23%-ը մինչև 35 տարեկան երիտասարդ կանայք էին, 63%-ը՝ միջին տարիքի, 35-63 տարեկան, և 14%-ը՝ 63 տարեկանից բարձր: Կուսակցությունների ցուցակներում ներկայացված կին և տղամարդ թեկնածուների առնվազն մեկ երրորդը գործազուրկ էր: Աշխատող կանանց 45%-ը կրթության համակարգից էր:

4. ՀՀ Ազգային ժողովի կազմում կանանց ներկայացվածությունը 18% է

Վեցերորդ գումարման ՀՀ Ազգային ժողովի կազմում 105 պատգամավորներից 19-ը կամ 18%-ը կանայք են: Նրանց թվում մեկ կին՝ Տատյանա Միքայելյանը, անցել է ազգային փոքրամասնությունների ներկայացուցիչների ցուցակով, և երկուսն ընտրվել են տարածքային ցուցակներով՝ Մանե Թանդիլյանը «Ելք» դաշինքից և Նորա

Առուստամյանը «Ծառուկյան» դաշինքից: Մնացած կին պատգամավորներն անցել են խորհրդարան համապետական ցուցակներով:

Նախորդ գումարման Ազգային ժողովի կազմում կանայք 10%-ով էին ներկայացված, և այս ընտրություններում արձանագրված արդյունքը կարելի էր մեկ քայլ առաջ դիտարկել, եթե չլինեին ՀՀ ընտրական օրենսգրքում մեկ սեռի առնվազն 25-տոկոսանոց ներկայացվածություն ամրագրող քվոտայի հետ կապված ակնկալիքները, որոնք, ըստ էության, կրկին չարդարացան: Այս առումով նույնիսկ Գյումրու և Վանաձորի ընտրություններում քվոտան շատ ավելի արդյունավետ աշխատեց՝ ապահովելով ավագանիների կազմում 24% կին:

Հայաստանի հանրապետական կուսակցությունը 58 մանդատ է ստացել, որոնցից 8-ը կամ 14%-ը բաժին են ընկել կանանց:

«Ծառուկյան» կուսակցությունների դաշինքը 31 մանդատ է ստացել, որոնցից 8-ը կամ 25,8%-ը կանայք են ստացել: Տարածքային ցուցակով ընտրվել է մեկ կին պատգամավոր, նաև համապետական ցուցակի երկրորդ մասից, որում ընդգրկված են Հայաստանում բնակվող ազգային փոքրամասնությունների ներկայացուցիչներ, խորհրդարան է անցել մեկ կին՝ Հայաստանում ռուսական համայնքից:

«Ելք» կուսակցությունների դաշինքը ներկայացված է 9 պատգամավորով, որոնցից 2-ը կամ 22%-ը կին են: Նրանցից մեկն անցել է տարածքային ցուցակով:

ՀՅԴ կուսակցությունը ԱԺ-ում ունի 7 պատգամավոր, նրանցից մեկն է կին (14%):

ՀՀ ընտրական օրենսգրքում ամրագրված մեկ սեռի առնվազն 25-տոկոսանոց ներկայացվածությունը Ազգային ժողով անցած քաղաքական ուժերից միայն մեկն է կարողացել ապահովել: Թեպետ խորհրդարանական ընտրությունների մասնակից կուսակցությունների ցուցակներում ընդգրկված թեկնածուների 30%-ը կանայք էին:

Ի տարբերություն նախորդ ընտրությունների, երբ կանանց թիվը նվազեց ինքնաբացարկների պատճառով, այս անգամ հիմնական պատճառը տարածքային կամ, այսպես կոչված, ռեյտինգային ցուցակներն էին, որտեղ կանայք ուղղակի դուրս մնացին փողատեր տղամարդկանց միջև ծավալված պայքարից: Ինչ վերաբերում է ինքնաբացարկներին, ապա այս անգամ դրանից տուժեցին հիմնականում տղամարդիկ: Մասնավորապես, ԿԸՀ ներկայացված ընդհանուր թվով 35 դիմումից (ՀՀԿ-ից՝ 9 դիմում, ՀՅԴ-ից՝ 3, «Ծառուկյան» դաշինքից՝ 23 դիմում) միայն երկուսն էին կանայք ներկայացրել:



Ինչպես աշխատեց քվոտան ՀՀ Ազգային ժողովի ընտրություններում

2012թ.

5-րդ գումարման Ազգային ժողովի կազմ

2017թ.

Կին թեկնածուների թիվը համամասնական ցուցակներում	29,5%	
Կին թեկնածուների թիվը տարածքային ցուցակներում	30,8%	

6-րդ գումարման Ազգային ժողովի կազմ

Կանայք նորընտիր խորհրդարանի պատգամավորական կազմում

«ՀՀԿ» խմբակցության 58 անդամներից 8-ը կին են
«Ծառուկյան դաշինք» խմբակցության 31 անդամներից 8-ը կին են
«Ելք դաշինք» խմբակցության 9-ը անդամներից 2-ը կին են
«ՀՅԴ կուսակցություն» խմբակցության 7 անդամից մեկն է կին



Ազգային ժողովի խմբակցություններից միայն մեկն է առաջադրել իր կազմում քվոտային համապատասխան սեռերի 25/75 համամասնությունը

Կանայք ՀՀ Ազգային ժողովի ղեկավար կազմում

ՀՀ Ազգային ժողովի խորհրդի **17** անդամներից միայն **2**-ն են կին

12%

ՀՀ Ազգային ժողովի նախագահի պաշտոնում երբևիցե կին չի առաջադրվել
Փոխնախագահներից մեկն է կին՝ Արփինե Հովհաննիսյան
Խմբակցությունների ղեկավարների թվում կանայք չկան
Մշտական հանձնաժողովների ղեկավարներից մեկն է կին՝ Նաիրա Զոհրաբյան

5. Աշխարհի խորհրդարաններում կանայք՝ 23,4%

ՀՀ Ազգային ժողովում կանանց ներկայացվածությունը 18% է դարձել, ինչի շնորհիվ Հայաստանն այդ ցուցանիշով բարելավել է իր դիրքերը Միջխորհրդարանական միության վարկանիշային աղյուսակում՝ զբաղեցնելով այժմ 110-րդ հորիզոնականը 193 երկրների շարքում, նախկին՝ 160-րդ հորիզոնականի փոխարեն: Վրաստանում կանանց ներկայացվածությունը խորհրդարանում անցյալ տարվա ընտրությունների արդյունքներով 16% է, Ադրբեջանում 2015-ի ընտրությունների արդյունքներով՝16,8%: Միջխորհրդարանական միության վերջին տվյալներով՝ կանանց ներկայացվածությունն աշխարհի միապալատ խորհրդարաններում միջինում կազմում է 23,4%: ԵԱՀԿ երկրներում միջին ցուցանիշը 26,6% է: Կանանց խորհրդարանական մասնակցությունը արաբական աշխարհի երկրներում 18,9% է:

6. «Կանանց օրակարգն» ուժի մեջ է

«Հավասար» քարոզարշավը նախաձեռնող կազմակերպությունները՝ «ՕքսԵՋԵն» երիտասարդության և կանանց իրավունքների պաշտպանության հիմնադրամը, WomenNet.am կայքի և «Ընտանիքի ակադեմիա» ՀԿ-ի հետ համագործակցությամբ, խորհրդարանական ընտրություններին ընդառաջ «Կանանց օրակարգ» ներկայացրեցին ընտրություններին մասնակից բոլոր քաղաքական ուժերին, ակնկալելով, որ ընտրվելու դեպքում նրանք բարձրաձայնելու են խորհրդարանի ամբիոնից «Կանանց օրակարգ»-ում ընդգրկված խնդիրները ու առաջարկելու են դրանց լուծումները:

«Կանանց օրակարգի» տեքստը ներառում է մի շարք հարցադրումներ՝ կապված կանանց ու տղամարդկանց հավասար իրավունքների և հնարավորությունների ապահովման հետ, փաստեր տարբեր ոլորտներում առկա հիմնախնդիրների շուրջ, ինչպես նաև առաջարկում է դրանց հնարավոր լուծումները: Դրանով իսկ օրակարգը տեղեկատվության հարուստ աղբյուր է հանդիսանում Հայաստանում առկա գենդերային իրավիճակի վերաբերյալ յուրաքանչյուր պատգամավորի համար, ով մտահոգված է այդ հարցերով: «Կանանց օրակարգի» հարցադրումները հիմնված են ՀՀ Սահմանադրության, ՀՀ գենդերային քաղաքականության հայեցակարգի շրջանակում ընդունված օրենքների և ծրագրերի, Հայաստանի Հանրապետության միջազգային պարտավորությունների, ՀՀ վիճակագրական տվյալների, հանրապետությունում անցկացված վերջին հետազոտությունների և սոցիոլոգիական հարցումների վրա:

Ընտրություններից հետո «Կանանց օրակարգը» շարունակում է ուժի մեջ մնալ՝ այս անգամ արդեն ընտրված չորս քաղաքական ուժերի հետ համագործակցության համատեքստում: Օրակարգի հիմնական նպատակն է նորընտիր Ազգային ժողովում

ներկայացված պատգամավորների ուշադրությունը հրավիրել կանանց ու տղամարդկանց հավասարությունն ապահովող հիմնախնդիրների վրա, ակնկալելով, որ նրանք ոչ միայն կբարձրացնեն այդ հարցերը խորհրդարանի ամբիոնից, այլև լուծումներ կառաջարկեն դրանց ուղղությամբ:

7. Տարածքային ցուցակները իջեցրեցին քվոտայի արդյունավետությունը

Թեպետ տարածքային ցուցակներում Ընտրական օրենսգրքի պահանջով կուսակցություններն ապահովել էին միջինում կանանց 30,8% մասնակցություն, տարածքային կամ, ինչպես դրանք անվանեցին, «ռեյտինգային» ցուցակներով ամենամեծ թվով ձայներ ստացած պատգամավորները բացառապես տղամարդիկ էին: Կարելի է փաստել, որ հենց տարածքային ցուցակները զգալիորեն իջեցրեցին քվոտայի արդյունավետությունը խորհրդարանական ընտրություններում:

Ռեյտինգային ցուցակներով խորհրդարան է անցել Մանե Թանդիլյանը «Ելք» դաշինքից, ով առաջադրվելով թիվ 1 ընտրատարածքում՝ կարողացել է ապահովել 5110 ձայն իր դաշինքի համար: «Ծառուկյան» դաշինքից Նորա Առուստամյանը Արագածոտնի մարզի թիվ 7 ընտրատարածքում ստացել էր 4789 ձայն, ինչը բավարար չէր խորհրդարան անցնելու համար, սակայն նա ստացավ պատգամավորի մանդատը՝ այդ ընտրատարածքում իրենից ավելի շատ ձայներ ստացած տղամարդ թեկնածուի ինքնաբացարկի արդյունքում:

Տարածքային ցուցակներում ընդգրկված կանանցից ևս մեկ կին՝ Լոռու մարզի թիվ 9 ընտրատարածքում ՀՀԿ ռեյտինգային ցուցակում ընդգրկված Լուսինե Մեջլումյանը ստացել էր գրեթե նույն թվով ձայներ՝ 4722 քվե, սակայն նրա դեպքում դա բավարար չէր խորհրդարան անցնելու համար: Անկախ նրանից, թե ընտրատարածքներում կանայք քանի ձայն են ապահովել իրենց կուսակցությունների համար, ռեյտինգային ցուցակներով խորհրդարան անցած գրեթե բոլոր թեկնածուները 5-10 հազարի կարգի և ավելի ձայներ են ստացել: Ընդհանուր թվով, տարածքային ցուցակներով առաջադրված 353 կանանցից միայն 14-ն են ստացել 1000-2000 ձայն, մնացած կանայք հազարից քիչ ձայներ են ստացել: Ընդհանուր առմամբ, կարելի է փաստել, որ ռեյտինգային ցուցակները շատ ավելի անբարենպաստ գտնվեցին կանանց համար, քան նախկին մեծամասնական ընտրակարգը: Քաղաքագետ Արմեն Բաղդասարյանի խոսքով՝ 100-տոկոսանոց համամասնական ընտրակարգի անցումը, ինչը ներկայացվում էր որպես առաջընթաց, ճիշտ հակառակ արդյունքի բերեց՝ գործնականում հանգեցնելով 100 տոկոսանոց մեծամասնական ընտրակարգի, որտեղ ամեն ինչ որոշվում է ռեյտինգային թեկնածուների ձայներով, իսկ կուսակցություններն ընդհանրապես գրեթե դեր չեն խաղում:

Մի շարք քաղաքետներ անցած խորհրդարանական ընտրությունները որակեցին «որպես փողի ու ավելի շատ փողի միջև գործարք ու առևտուր»: Այդ առևտրում քաղաքական ուժերն ու թեկնածուները գնորդներն էին, ընտրողները՝ ձայն վաճառողները: Տարածքային ցուցակներում ընդգրկված կանայք գնորդ չդարձան, փող չառաջարկեցին և, ի հետևանք, պարտվեցին: Նրանք առաջարկում էին քաղաքական գործընթացներին նոր որակ հաղորդելու ծրագրեր, հոգսառատ քաղաքացու կողքին լինելու ցանկություն ու պատրաստակամություն: Սակայն այս արժեքները պահանջված չէին: «Կովկաս» ինստիտուտի տնօրեն, քաղաքագետ Ալեքսանդր Իսկանդարյանի բնորոշմամբ՝ հասարակությունն առաջնորդվել է «քվեարկում ենք ոչ թե սրտով, այլ ստամոքսով» սկզբունքով: Այսինքն՝ մարդիկ քվեարկում են ոչ թե գաղափարախոսության համար, այլ անձով պայմանավորված կամ պահի շահով: «Պահի շահ ասելով՝ նկատի ունեմ փոխել շենքի մուտքի դուռը, տան պատուհանը, գյուղում ճանապարհն ասֆալտապատել և այլն: Գրեթե բոլոր քաղաքական ուժերն այս ուղղությամբ աշխատել են»,- ասել է Ալեքսանդր Իսկանդարյանը:

Փողի դերն այս ընտրություններում ակնհայտ մեծ է եղել: Հիմնական մրցակցությունը տեղերում շատ ժամանակ ծավալվել է նույն քաղաքական ուժի փողատեր ներկայացուցիչների միջև, և կանայք, ովքեր մեծ բիզնեսում ներգրավված չեն, ուղղակի դուրս են մնացել այդ պայքարից: Ընդ որում, ոչ միայն կանայք, նույնը վերաբերում է համապատասխան վարչական և ֆինանսական ռեսուրսներ չունեցող տղամարդ թեկնածուներին:

8. Ի՞նչ է ցույց տվել նախընտրական ծրագրերի գենդերային վերլուծությունը

Խորհրդարանական ընտրություններին մասնակից քաղաքական ուժերի նախընտրական ծրագրերը, ընդհանուր առմամբ, գենդերային կույր սկզբունքով էին կազմված: Դրանցում նախատեսվող գործողություններն ու դրանց արդյունքները ըստ սեռի թիրախավորված չէին: Հավասար իրավունքների և հավասար հնարավորությունների ապահովման նպատակ չէր դրվում, այդ կոնցեպտը ծրագրերում ընդհանրապես բացակայում էր, թեպետ կանանց ՀԿ-ների կողմից այդ ուղղությամբ որոշակի աշխատանք կատարվել էր:

Ընտրություններին մասնակցող քաղաքական ուժերի ծրագրերի շարադրանքը տարբերվում էր նախորդ ընտրությունների ծրագրերից, դրանք արտահայտում էին երկրի ճգնաժամային վիճակը, գրեթե բոլորում հատուկ շեշտադրմամբ էին ներկայացված երկրի պաշտպանության և տնտեսական զարգացման խնդիրները, սոցիալական փաթեթները: Կանանց հիմնախնդիրներին անմիջական անդրադարձն

առկա էր միայն երկու-երեք դրույթներում: Այսպես, «Հայկական վերածնունդ» կուսակցության նախընտրական ծրագրի կետերից մեկում նշված էր, որ «Սեփականության իրավունքով հողատարածք ունեցող կանանց աշխատանքը, որպես աշխատանքային ստաժի համարում՝ կենսաթոշակի ամենամյա ինդեքսավորմամբ ու բարձրացմամբ»: «Ազատ դեմոկրատների» ծրագրում կար դրույթ, որով նախատեսվում է «30-50%-ով ավելացնել մայրերի վճարովի արձակուրդի տևողությունը՝ նման հնարավորություն ընձեռելով նաև հայրերի համար», ինչպես նաև մեկ այլ դրույթ, որով առաջարկվում էր «վճարովի հիմունքներով բանակում ծառայելու հնարավորություն կտրվի նաև կանանց ու աղջիկներին: Այդ նպատակով կստեղծվեն հատուկ գնդեր»: Հայաստանի կոմունիստական կուսակցության նախընտրական ծրագրով նախատեսվում էր «Մայրական կապիտալի մասին» օրենքի ընդունում: Մյուս քաղաքական ուժերի ծրագրերում գենդերային զգայուն դրույթներ չկային, կարելի էր միայն ենթադրել, որ որոշ ծրագրային դրույթների իրագործումը կարող է նպաստել կանանց տնտեսական հնարավորությունների ընդլայնմանը կամ անուղղակի ազդեցություն ունենալ նրանց իրավիճակի բարելավման առումով:

Գրեթե բոլոր ծրագրերում կան դրույթներ, որոնք կարող են նպաստավոր դաշտ ստեղծել փոքր և միջին բիզնեսի զարգացման և, հետևապես՝ կանանց ձեռներեցության համար: Ծրագրերից շատերում նախատեսվում էր հատկապես ուսուցիչների և առողջապահության ոլորտի աշխատողների աշխատավարձի բարձրացում կամ մանկավարժների շաբաթական ծանրաբեռնվածության (դրույք) 18-ժամյա չափանիշի ներդրում, ինչը կարելի է դիտարկել որպես կանանց հիմնախնդիրների լուծման համար նպաստավոր դրույթներ, հաշվի առնելով այն փաստը, որ այդ ոլորտների աշխատակիցների բացարձակ մեծամասնությունը կանայք են: Ուշադրության է արժանի «Ելք» դաշինքի ծրագրի հետևյալ դրույթը. «Ծննդատներում կներդրվի հոգեբանի ինստիտուտը, կանխելու համար նոր ծնված՝ առողջական խնդիրներ ունեցող երեխաների տեղափոխումը հատուկ հաստատություններ, և կստեղծվի ընտանիքների աջակցության մշտական ծառայություն, կզարգացվեն խնամատարության և որդեգրման ինստիտուտները»:

Ծրագրերի մեջ առկա էին դրույթներ, որոնք անուղղակի ձևով կարող էին նպաստել կանանց քաղաքական մասնակցության ընդլայնմանը: Օրինակ՝ ՕՐՕ դաշինքի առաջարկը՝ «հարյուր տոկոսանոց համամասնական ընտրակարգի՝ առանց ռեյտինգային քվեարկության և բոնուսային համակարգի»: Նույն առաջարկը կար Կոնգրես-ՀԺԿ դաշինքի ծրագրում: ՀՀԿ-ի ծրագրում կանանց համար նպաստավոր կարող էր լինել ավագանու ընտրություններում համամասնական ցուցակի ներդրումը, ինչը գենդերային քվոտայի կիրառման հնարավորություն կընձեռի և կնպաստի կանանց ներկայացվածության ընդլայնմանը ՏԻՄ համակարգում: ՀՅԴ կուսակցության նախընտրական ծրագրում մարդու իրավունքներին վերաբերող

բոլոր դրույթներն ընդգրկված էին «Մարդը և պետությունը» բաժնում, որում զետեղված էին արդարության, ազնիվ մրցակցության, բոլորի համար հնարավորությունների ապահովման սկզբունքները: Կարելի է ենթադրել, որ դրանք վերաբերում են նաև կանանց, սակայն միջազգային ու պատմական փորձը ցույց է տալիս, որ գենդերային չեզոք շարադրումները, որպես կանոն, բերում են գենդերային կույր քաղաքականության:

Համեմատության համար՝ 2007-ին ՀՅԴ նախընտրական ծրագրում «Կանանց և տղամարդկանց իրավահավասարությունը» խորագրով առանձին բաժին կար, որում խոսվում էր կանանց և տղամարդկանց հավասար իրավունքների և հավասար հնարավորությունների ձեռքբերման, խտրականության վերացման օրենսդրական երաշխիքների անհրաժեշտության մասին: 2012-ին կուսակցության ծրագրում այդ բաժինը բացակայում էր, և հիշատակվում էին միայն կանանց զբաղվածության խնդիրները: 2017-ի ծրագրում վերը նշված բոլոր դրույթներն էին բացակայում, ըստ երևույթին, քվոտայի բարձրացման հետ մեկտեղ կուսակցությունը կանանց հարցն այլևս փակված է համարում:

Նախորդ ընտրությունների կուսակցությունների նախընտրական ծրագրերի դիտարկումը փաստում է, որ դրանք, որպես կանոն, գենդերային զգայունությամբ երբեք էլ աչքի չեն ընկել, կանանց օրակարգը դրանցում գրեթե միշտ սահմանափակվել է ընտանիքին և մայրությանը վերաբերող դրույթներով: Սակայն 2017-ի ծրագրերում կուսակցությունները այլևս չէին անդրադարձել նույնիսկ այն մինիմումին, որն առկա էր նախորդ ընտրությունների օրակարգում: Բացակայում էր նույնիսկ մայրության պաշտպանության խնդիրներին ավանդական անդրադարձը, կուսակցությունները չեն մտահոգվել նաև կանանց՝ ընտանիքն ու կարիերան համատեղելու հնարավորությունների ընդլայնման խնդրով: Այս հանգամանքն անուղղակի ձևով փաստում է, որ քաղաքական ուժերը լուրջ չեն վերաբերվում գենդերային հավասարությանը և բազմաթիվ այլ հիմնախնդիրների, որոնք կապված են երկրի զարգացման գործընթացներում կանանց մասնակցության հետ: Եվ հենց այդ պատճառով է, որ այդ հարցերը տեղ չեն գտնում կուսակցությունների ծրագրերում:

9. Քվոտան լավագույնս աշխատեց Երևանի ավագանու ընտրություններում

Երևանի նորընտիր ավագանու 65 անդամներից 18-ը կամ 28%-ը կանայք են: Այսինքն՝ կանանց ներկայացվածությունը զգալի աճել է նախորդ ավագանու կազմի համեմատ, որտեղ կանայք 10-ն էին կամ 15%-ը: Կարելի է փաստել, որ Երևանի ընտրություններում 25/75 համամասնությունն ամրագրող քվոտան աշխատեց

լավագույնս, թեպետ կուսակցությունների նախընտրական ցուցակներում կին թեկնածուները միջինում 38% էին:

Կանանցից 10-ն ընդգրկված են Հանրապետական խմբակցության կազմում (ընդհանուր՝ 46 մանդատ), 5-ը՝ «Ելք» խմբակցության (ընդհանուր 14 մանդատ), 3-ը՝ «Երկիր ծիրանի» խմբակցությունում (ընդհանուր 5 մանդատ):

ՀՀԿ խմբակցությունում կանանց ներկայացվածությունը 21,7% է, թեպետ կուսակցության նախընտրական ցուցակում կին և տղամարդ թեկնածուները ներկայացված էին օրենքի պահանջին համապատասխան 25/75 համամասնությամբ, և մինչև ինքնաբացարկները կուսակցության ընտրական ցուցակի առաջին 46 տեղերում 12 կին էր ընդգրկված: Ինքնաբացարկ հայտնած թեկնածուներից ութը կանայք էին, արդյունքում՝ մայրաքաղաքի ավագանու կազմում ՀՀԿ ընտրական ցուցակից 10 կանայք են ընդգրկվել՝ Աստղիկ Գևորգյանը, Աննա Ասատրյանը, Նաիրա Նահապետյանը, Ռոզա Սիրունյանը, Նատալյա Լափաուրին, Լիլիթ Բեգլարյանը, Աննա Մկրտչյանը, Ալինա Քուշկյանը, Անուշ Հայրյանը, Հասմիկ Սարգսյանը:

Մյուս խմբակցությունների մասով ինքնաբացարկներ չեն եղել, բացի «Ելք» դաշինքի ցուցակը գլխավորող Նիկոլ Փաշինյանից, ով ԱԺ պատգամավոր է: «Ելք» խմբակցության կազմում ընդգրկված է 5 կին՝ Անահիտ Բախշյանը, Անի Խաչատրյանը, Անի Սամսոնյանը, Թեհմինա Վարդանյանը, Զարուհի Բաթոյանը: Կանանց ներկայացվածությունը խմբակցությունում 36% է, ինչն ավելին է, քան դաշինքի նախընտրական ցուցակում, որում կին թեկնածուները 33% էին կազմում:

«Երկիր ծիրանի» խմբակցության հինգ անդամներից այսօր երեք անդամ է մնացել (ընտրություններից հետո երկու անդամ կուսակցությունից հեռացել են), երեքն էլ կանայք են՝ Զարուհի Փոստանջյանը, Սոնա Աղեկյանը, Մարինա Խաչատրյանը: Կուսակցության նախընտրական ցուցակում կին թեկնածուները 57% էին կազմում:

Այսպիսով, Երևանի ավագանու ընտրություններում 25/75 քվոտայի արդյունավետությունը շատ ավելի բարձր էր, քան հանրապետությունում մինչ այդ անցկացված բոլոր համամասնական ընտրություններում, այդ թվում՝ Ազգային ժողովի (19%), ինչպես նաև անցյալ տարվա Գյումրիի ու Վանաձորի ավագանու ընտրություններում (24%): Եվ եթե չլինեին կանանց ինքնաբացարկները ՀՀԿ-ի ցուցակից, ապա կանանց ներկայացվածությունը կարող էր և 30%-ի հասնել՝ դրանով իսկ ապահովելով կանանց, այսպես կոչված, «կրիտիկական զանգվածը» ավագանու կազմում:

ԿԱՆԱՅՔ ԵՐԵՎԱՆԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԿԱԶՄՈՒՄ

Ինչպես աշխատեց քվոտան Երևանի ավագանու ընտրություններում

2013թ.

2-րդ գումարման Երևանի ավագանու կազմում

Կին թեկնածուները կուսակցությունների նախընտրական ցուցակներում՝ միջինում 38%

2017թ.

3-րդ գումարման Երևանի ավագանու կազմում

Կանայք Երևանի ավագանու խմբակցությունների կազմում

«ՀՀԿ» խմբակցության 46 անդամներից 8-ը՝ կին են
«Ելք դաշինք» խմբակցության 14-ը անդամներից 5-ը՝ կին են
«Երկիր Ծիրանի» խմբակցության 5 անդամից 3- կին

10. Քաղաքի արդար կառավարման սկզբունքները նախընտրական ծրագրերում

Թեպետ բոլոր կուսակցությունների ծրագրերում զգացվում էր գենդերային ուղղորդման պակասը, սակայն նրանցում կային բաժիններ, որոնց իրագործումը կարող էին նպաստել կանանց և տղամարդկանց համար հավասար հնարավորությունների ստեղծմանը, կենցաղային առօրյայի հետ կապված բազմաթիվ խնդիրների լուծմանը, քաղաքի ավելի արդար կառավարմանը: Ըստ միջազգային մոտեցումների՝ քաղաքի արդար կառավարման մոդելը, մի կողմից, պահանջում է գործընկերային հարաբերությունների հաստատում պետության և քաղաքացիական հասարակության կազմակերպությունների միջև, քաղաքացիների ներգրավում կառավարման գործում: Մյուս կողմից՝ արդար կառավարումը ենթադրում է քաղաքային խնդիրների առաջադրում տարբեր սոցիալական խմբերի, այդ թվում ամենամեծի՝ կանանց կարիքների հաշվառմամբ: Պատահական չէ, որ քաղաքի արդար կառավարման հարացույցն առաջին անգամ առաջ է քաշվել եվրոպական ֆեմինիստուհիների կողմից: Ըստ էության, քաղաքային բնակչության կարիքների տարիքային և գենդերային առանձնահատկությունների հաշվառումը նշանակում է, որ քաղաքի հարմարավետությունը պետք է դիտարկվի մասնավոր կյանքի տեսանկյունից, որտեղ չափազանց մեծ է հատկապես կանանց դերակատարությունը: Օրինակ՝ կանանց կարիքները, հաշվի առնելով քաղաքում նրանց տեղաշարժման առօրյա նպատակները, ավելի բազմազան են, և նրանց կարիքների հաշվառումը ենթադրում է քաղաքային ենթակառուցվածքների հարմարավետության բարձրացում:

Կանայք նաև ավելի ակտիվ դերակատարում ունեն մի շարք խնդիրների լուծման հարցում: Օրինակ՝ քաղաքային իշխանությունների կողմից կարևորվող մի շարք հարցեր՝ աղբահանության մշակույթի բարձրացման, աղբի տեսակավորման, քաղաքի մաքրության ապահովման, դժվար է լուծել առանց կանանց ներգրավման, նրանց քաղաքացիական մասնակցության ընդլայնման: Ընդհանուր առմամբ, կարելի է փաստել, որ քաղաքի արդար կառավարման սկզբունքները հաշվի առնող ծրագրերը չեն կարող գենդերային զգայուն չլինել:

Փորձելով գնահատել Երևանի ավագանու ընտրություններին մասնակից կուսակցությունների նախընտրական ծրագրերը քաղաքի արդար կառավարման մոդելին համապատասխանության տեսանկյունից՝ կարելի է նկատել, որ առավել զգայուն էր այդ առումով «Երկիր ծիրանի» կուսակցության ծրագիրը, որի ուժեղ կողմերից էր «Համագործակցություն քաղաքացիական հասարակության հետ» բաժինը: Դրանում նախատեսվում էր ըստ ոլորտների հասարակական կազմակերպությունների, մասնագիտական միությունների ներկայացուցիչների հետ հանրային քննարկումների և խորհրդակցության աշխատանքների իրականացում: Նման քաղաքականությունը կարող է քաղաքի արդար կառավարման սկիզբ հանդիսանալ՝ հնարավորություն ընձեռելով օգտագործել կանանց հասարակական

կազմակերպությունների տարիների ընթացքում կուտակած նշանակալի փորձը՝ տարբեր սոցիալական խմբերի կարիքների վերհանման, նրանց խնդիրների լուծման ուղիների վերաբերյալ:

Կուսակցության ծրագրում որպես հիմնախնդիրներ շեշտադրվում են հանրային կանաչ տարածքների կրճատումը, թաղամասերի անվտանգության ցածր մակարդակը, բնակելի միջավայրի սանիտարահիգիենիկ պայմանների վատթարացումը, որը պայմանավորված է ոչ մեծ թաղամասերում բնակչության խտության մեծացմամբ: Մասնավորապես, «Փողոցների և բակային տարածքների բարեկարգում» բաժնում նախատեսված է. «Բակային տարածքների վերակառուցում և վերանորոգում, հենապատերի վերականգնում, հեծանվային ուղիների կառուցում, վերգետնյա և ստորգետնյա անցումների կառուցում ու վերանորոգում»: Կուսակցության ծրագրի «Արտաքին լուսավորություն» բաժնում նախատեսվում է. «Չլուսավորվող փողոցների, նրբանցքների, բակերի և խաղահրապարակների լուսավորում, …քաղաքային կանաչ լուսավորության ծրագրի ներդնում»:

Բնակիչների հարմարավետությանն ուղղված կետեր կան նաև ՀՀԿ նախընտրական ծրագրում: Դրանցից մենք առանձնացրեցինք նրանք, որոնք անմիջականորեն վերաբերում են մասնավոր կյանքին և իրագործման դեպքում ավելի հարմարավետ կդարձնեն քաղաքը, ինչը կնպաստի նաև կանանց կենցաղային հոգսերի թեթևացմանը: Օրինակ՝ ծրագրում նախատեսվում է. «Մշակել և իրականացնել բազմաբնակարան շենքերի ջերմամեկուսացման և էներգետիկ արդյունավետության բարձրացման համալիր ծրագիր, իրականացնել բազմաբնակարան շենքերի ջրամատակարարման և ջրահեռացման ներքին ցանցի նորոգման աշխատանքներ, իրականացնել առանց կոյուղատար համակարգի թաղամասերում դրանց կառուցումը»: Ծրագրով նախատեսվում է նաև բակային տարածքների բարեկարգում, նոր խաղահրապարակների և ֆուտբոլի դաշտերի կառուցում, բակային հանգստի նպատակային կազմակերպում: Անվտանգությանն է ուղղված ծրագրով նախատեսվող արտաքին լուսավորության ցանցի ընդլայնումը, բոլոր փողոցների և բակային տարածքների լուսավորությունը:

Տրանսպորտի աշխատանքի բարելավում նախատեսված էր բոլոր կուսակցությունների ծրագրերում: «Երկիր ծիրանի» կուսակցության ծրագրում, օրինակ՝ շեշտը դրվում էր հեծանվային ուղիների ստեղծման և տրամվայների վերագործարկման վրա: Ուշագրավ են հետևյալ դիտարկումները՝ «Քաղաքում անհրաժեշտ է նշանակալի հետիոտնային տեղաշարժով փողոցների հետիոտնային տարածքների վերաձևավորում», «Հեծանիվը կարող է դառնալ հանրային տրանսպորտի և անձնական ավտոմեքենայի այլընտրանք, բայց առանց նորմալ ենթակառուցվածքների դա հնարավոր չէ», «Սակավաշարժ բնակչության համար անհրաժեշտ ենթակառուցվածքների ստեղծում»:

«Ելք» դաշինքը տրանսպորտի աշխատանքների վերափոխման մասին առաջարկներով է հանդես գալիս. նախատեսվում է ապահովել տրանսպորտի հասանելիությունը մինչև կեսգիշեր, նախատեսել հեծանվային միջանցք, մինչև 2022 թ. հաշմանդամություն ունեցող անձանց համար հարմարեցնել ավտոբուսների 40 և տրոլեյբուսների 100 տոկոսը: «Ելքը» նաև խոստանում է՝ ավտոբուսների, տրոլեյբուսների, մետրոպոլիտենի կողմից ուղևորափոխադրումների չափաբաժինը առաջիկա հինգ տարիներին հասցնել 80 տոկոսի՝ ներկայիս 46 տոկոսի փոխարեն:

Տրանսպորտի բարելավման մեծ ծրագիր կա նաև ՀՀԿ-ի ծրագրում: Ծրագրում հատուկ ուշադրության են արժանացել տեղաշարժման խնդիրներ ունեցող քաղաքացիների հիմնախնդիրները: Նախատեսվում էր «շարունակել տեղաշարժման խնդիրներ ունեցող անձանց համար հարմարավետություն ապահովելու նպատակով իրականացվող ծրագրերը. հանրային շենքերում ապահովել թեքահարթակներ, հասարակական տրանսպորտում շարունակել տեղադրել համապատասխան սարքավորումներ, հանրային տարածքներում ապահովել տեղաշարժման մատչելիություն, տեղաշարժման մատչելիությունն ապահովելու նպատակով վերգետնյա և ստորգետնյա անցումներն ապահովել հատուկ սարքավորումներով և վերելակներով»:

Բոլոր կուսակցությունների ծրագրերում կարևորվում է աղբահանության խնդիրը: Սակայն խնդրի լուծման համար չափազանց կարևոր է կանանց ներգրավումը: Տնային տնտեսություններում աղբահավաքման, աղբի տեսակավորման գործում մեծ դեր կարող են ունենալ կանայք և՛ որպես տնային տնտեսությամբ հիմնական զբաղվողներ (մեզանում տնային տնտեսությունում պարտականությունների հավասար բաժանումը կանանց և տղամարդկանց միջև դեռևս մշակութային արժեք չունի, և հոգսը հիմնականում կանանց ուսերին է), և՛ որպես սերնդի դաստիարակներ (ընդ որում, ոչ միայն տանը, չմոռանանք, որ մանկավարժների գերակշիռ մասը կանայք են):

Մեծ տեղ են գրավում ծրագրերում նաև բնապահպանական խնդիրները: Բոլոր կուսակցությունները կարևորում են քաղաքի կանաչապատումը: ՀՀԿ ծրագրում ուշագրավ է այդ տեսակետից նախատեսվող հանգստի նոր գոտիների հիմնումը, այգիների և զբոսայգիների բարեկարգումը, հանրային տարածքներում հասարակական զուգարանների առկայությունը: Հանրային զուգարանների վերաբերյալ կետ կա նաև «Ելք» դաշինքի ծրագրում: Դաշինքի ծրագրում նախատեսվում է նաև ընտանեկան հանգստի գոտու ստեղծում:

«Երկիր ծիրանի» կուսակցության ծրագրի «Զբոսաշրջություն» մասում նշվում է. «Զբոսաշրջային արդյունաբերությունն ամբողջությամբ ընդգրկված է փոքր ու միջին ձեռնարկատիրության ոլորտում և ներառում է (աշխատողների առումով) մարդկային ռեսուրսի սոցիալապես խոցելի խավեր, ինչպիսիք են երիտասարդներն ու կանայք»:

Նշվում է, որ զբոսաշրջության զարգացման խելամիտ և արդյունավետ պլանավորումն ու կառավարումը կնպաստեն քաղաքի կայուն զարգացման ապահովմանը:

Դրական է, որ բոլոր ծրագրերում մեծ ուշադրություն է դարձվում նախադպրոցական հիմնարկների թվի ավելացմանը, առողջական տարբեր խնդիրներ ունեցող երեխաների համար ենթակառուցվածքների ստեղծմանը, ներառական կրթությանը:

Երևանի ավագանու ընտրություններում «Ելք» դաշինքի ցուցակը գլխավորող Նիկոլ Փաշինյանը քարոզարշավի ընթացքում անդրադարձել էր խնդրին: «Այսօր մոտ 8000 երեխա մանկապարտեզի իր հերթին է սպասում և չի կարողանում մանկապարտեզներում ընդունելության արժանանալ: Մյուս կողմից՝ Երևանի բազմաթիվ մանկապարտեզների տարածքը վարձակալությամբ տրված է այլ անձանց»,- ասել էր Փաշինյանը:

Նույն դաշինքի ցուցակով առաջադրված թեկնածու Զարուհի Բաթոյանը քարոզարաշավի ընթացքում, անդրադառնալով մանկապարտեզների խնդրին, ասել էր. «Երբ դառնամ ավագանու անդամ, բարձրացնելու եմ մանկապարտեզների աշխատանքային ժամերը մինչև 18:30-ը դարձնելու հարցը: Այլապես աշխատանքային ժամն ավարտվում է 18-ին, իսկ մանկապարտեզները դրանից մեկ ժամ շուտ են փակվում: Երևի էս կարգը հորինողների երեխաներին արագիլն է մանկապարտեզից տուն տանում»:

Ընտրությունների մասնակից մյուս ընդդիմադիր ուժը՝ «Երկիր ծիրանին», հրապարակած ծրագրում ևս անդրադարձել է խնդրին՝ մատնանշելով իր պատկերացրած լուծումը. «Բյուջեի միջոցներով վերանորոգել մայրաքաղաքի բոլոր նախադպրոցական հաստատությունները (մանկապարտեզները) և կառուցել նորերը, դաստիարակների ու դայակների համար ստեղծել նոր աշխատատեղեր, ինչի շնորհիվ մանկապարտեզներում նաև կվերացվեն կոռուպցիոն ռիսկեր պարունակող հերթագրումները: Մանկապարտեզները պետք է ապահովված լինեն առողջական տարբեր խնդիրներ ունեցող երեխաների հետ աշխատող համապատասխան մասնագետներով: Այս երեխաներն իրենց պետք է լիարժեք զգան մանկապարտեզում, ինչը կարևոր է հետագայում նրանց՝ դպրոցում ևս լիարժեք ու անկաշկանդ կրթություն ստանալու համար»:

ՀՀԿ-ի նախընտրական ծրագրով նախատեսվում է ապահովել Երևանի քաղաքապետարանի ենթակայության տակ գտնվող մանկապարտեզների աշխատողների առողջապահական պարտադիր ապահովագրումը, լիարժեքորեն ապահովել նախադպրոցական կրթություն՝ մանկապարտեզներում հերթերի հիմնախնդրի ամբողջական կարգավորմամբ, ապահովել անվճար նախադպրոցական կրթության ծրագրի շարունակությունը:

Այսօր մայրաքաղաքում բնակվող նախադպրոցական տարիքի շուրջ 8000 երեխա սպասում է մանկապարտեզ գնալու իր հերթին, նրանցից 1800-ը երեք տարեկանից բարձր են: Պաշտոնական տվյալների համաձայն՝ Երևանի քաղաքապետարանի ենթակայությամբ գործում են 160 նախադպրոցական ուսումնական հաստատություններ: Մանկապարտեզ հաճախող երեխաների թիվը 30.067 է: Յուրաքանչյուր տարի՝ սկսած 2011 թվականից, ապահովվել է շուրջ 30.000 երեխայի նախադպրոցական անվճար կրթություն:

Նշենք, որ Երևանի քաղաքապետարանը չի նախատեսում հաջորդ տարի ավելացնել գործող մանկապարտեզների թիվը: Նոր մանկապարտեզի մասին խոսք չկա ո՛չ բյուջեի նախագծում, ո՛չ էլ զարգացման ծրագրում: 2018-ին նախատեսվող աշխատանքներում ընդգրկված են մանկապարտեզների շենքերի վերանորոգման և հիմնանորոգման շարունակականության ապահովում, մանկապարտեզներում հերթերի հիմնախնդրի կարգավորման ուղղությամբ միջոցառումների իրականացում: Հստակեցում չկա, թե ի՛նչ միջոցով է հերթերի հիմնախնդրի կարգավորումը տեղի ունենալու:

Եզրակացություն

Ամփոփելով 2017 թվականին համամասնական ընտրակարգով անցած խորհրդարանական և Երևանի ավագանու ընտրությունները կարելի է փաստել, որ գենդերային քվոտայի կիրառումը ակնհայտորեն նպաստեց նշված մարմիններում կանանց ներկայացվածության բարձրացմանը: Դրա հետ մեկտեղ, Ազգային ժողովի ընտրություններում տարածքային ցուցակների ներմուծումը լուրջ խոչընդոտ հանդիսացավ կին թեկնածուների համար և, ըստ էության, իջեցրեց կիրառվող քվոտայի արդյունավետությունը: Երևանի ավագանու ընտրություններում , որտեղ գործում էր մաքուր համամասնական ընտարակարգն առանց տարածքային ցուցակների, քվոտավորման սկզբունքն աշխատեց առավել արդյունավետ. կանանց ներկայացվածությունը ընտրված մարմնում ավելի բարձր է, քան նախատեսված քվոտան: